ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

# ՀՐԱՄԱՆ

Թիվ 8 -Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 16-Ի ԹԻՎ 1-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ ոստիկանության կազմ-հաստիքային օպտիմալացման գործընթացը և հիմք ընդունելով 11.07.2018թ. ՀՀ վարչապետի թիվ 751-Լ որոշման 20-րդ կետի 8-րդ ենթակետը՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. ՀՀ ոստիկանության պետի 2018 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշման կիրարկումն ապահովելու մասին» թիվ 1-Լ հրամանի հավելվածով հաստատված ժամանակացույցի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 7-րդ կետերի կատարման ժամկետ սահմանել 15.11.2018թ.:
2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայություններին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Վ.ՕՍԻՊՅԱՆ

«15» 08 2018թ.
ք. Երևան

***15.08.2018թ. դրությամբ***

**1-Լ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ԹԻՎ751 – Լ ՈՐՈՇՄԱՆ ԿԻՐԱԿՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրության պատշաճ կիրարկումն ապահովելու նպատակով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշման կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Հավելվածի «Պատասխանատու ստորաբաժանում» սյունյակում առաջին կատարող հանդիսացող Ոստիկանության ստորաբաժանումների պետերին՝ համագործակցելով Ոստիկանության համակատարող

ստորաբաժանումների հետ, սահմանված ժամկետներում, մշակել և ՀՀ ոստիկանության պետի հաստատմանը ներկայացնել իրավական ակտի նախագիծը:

3. Հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը հանձնարարել ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հ.Քոչարյանին:

**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Վ.ՕՍԻՊՅԱՆ**

« 16» 07.2018թ.
ք. Երևան

Հավելված
ՀՀ ոստիկանությանպետի
« 16 » ____07____ 2018թ.
թիվ ___1 - Լիրամանի

# Ժամանակացույց

**Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 751-Լ որոշման կիրարկումն ապահովող միջոցառումների իրականացման**

| h/h | Միջոցառման անվանումը | Պատասխանատու ստորաբաժանում | Ժամկետ |
|---|---|---|---|
| 1. | ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանների նախագծերի ներկայացում ՀՀ ոստիկանության պետին | Շտաբ<br>ԿՔՎ<br>ԻՎ | Կիսամյակի ընթացքում |
| 2. | ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի, դրա անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումների, Երևան քաղաքի և մարզային վարչությունների և դրանց ենթակա ստորաբա-ժանումների կանոնադրությունը հաստատելու մասին հրամանի նախագծերի ներկայացում ՀՀ ոստիկանության պետին | ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի,դրա անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումներ, Երևան քաղաքի և մարզային վարչություններ,դրանց ենթակա ստորաբաժանումներ<br><br>Շտաբ | 15.11.2018թ. |
| 3. | ՀՀ ոստիկանության ծառայողների, զինծառայողների, քաղաքացիական ծառայողների, քաղաքացիական աշխատանք կատարողների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց ներքին կարգապահականկանոններ հաստատելու մասին ՀՀ | ԻՎ<br>ՆԱՎ<br>Շտաբ | 15.11.2018թ. |

| | | | |
|---|---|---|---|
| | ոստիկանության պետի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ոստիկանության պետի | | |
| 4. | ՀՀ ոստիկանության պետի խորհրդականի, ոստիկանության ծառայողների, զինծառայողների, քաղաքացիական ծառայողների՝ տվյալ պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ոստիկանության պետին | ԿՔՎ<br>Շահագրգիռ ստորաբաժանումներ | 15.11.2018թ. |
| 5. | ՀՀ ոստիկանության պետի խորհրդականների և օգնականների միջև պարտականությունների բաշխելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ոստիկանության պետին | ՀՀ ոստիկանության պետի աշխատակազմ | 01.08.2018թ. |
| 6. | ՀՀ ոստիկանության պետի տեղակալների կողմից համակարգման ոլորտները սահմանելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ոստիկանության պետին | Շտաբ | 30.07.2018թ. |
| 7. | ՀՀ ոստիկանության գործունեության գնահատման գերատեսչական չափորոշիչները հաստատելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ոստիկանության պետին | Շտաբ | 15.11.2018թ. |
| 8. | Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների պետական կառավարման մարմինների ղեկավարներին կամ այլ պաշտոնատար անձանց, քաղաքացիներին, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց խրախուսելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ոստիկանության պետին | ԿՔՎ<br>ԻՎ | 20.07.2018թ. |
| 9. | ՀՀ ոստիկանությունում արձակուրդների տրամադրման կարգի և օտարերկրյա պետություններում արձակուրդի անցկացման թույլտվությունների կարգի համապատասխանեցում ՀՀ կառավարության 11.06.2018թ.թիվ 751-Լ որոշման պահանջներին | ԿՔՎ<br>ԻՎ | 20.07.2018թ |
| 10. | Ոլորտը կանոնակարգող իրավական ակտերի համապատասխանեցում ՀՀ կառավարության | ՀՀ ոստիկանության կենտրոնական ապարատի, դրա | Կիսամյակի ընթացքում |

| | | | |
|---|---|---|---|
| | 11.06.2018թ.թիվ 751-Լ որոշման պահանջներին | անմիջական ենթակայության կառուցվածքային ստորաբաժանումներ | |
| 11. | ՀՀ ոստիկանությունում խորհրդակցական մարմին (կոլեգիա) ստեղծելու, դրա անհատական կազմերը և աշխատակարգը հաստատելու մասին ՀՀ ոստիկանության պետի հրամանի նախագծի ներկայացում ՀՀ ոստիկանության պետին | Շտաբ | Կիսամյակի ընթացքում |

***(Հավելվածը խմբագրվել է 15.08.2018թ. թիվ 8-Լ հրամանի հիման վրա)***